

---

# ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՓԱԿ ՑԱՆԿԸ ԵՎ ԱՅՆ «ԲԱՑԵԼՈՒ» ՍՏՐԱՏԵԳԻԱՆԵՐԸ

## ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության  
և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ վաստակավոր իրավաբան  
DOI: 10.63925/18294847-2026.bl21-11

---

**Ամփոփագիր.** Հոդվածում քննության է առնվում քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի օրենսդրական փակ ցանկի (numerus clausus) բնույթը, դրա «բացման» հնարավորությունը և նոր հիմքերի ներառման ստրատեգիաները: Վերլուծվում է ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված ցանկի սպառիչ լինելը և դրանից բխող օրենսդրի գիտակցված լռության կանխավարկածը, որն արգելում է ցանկում չնախատեսված որևէ հանգամանք դիտարկել որպես հետապնդումը դադարեցնելու հիմք:

Հեղինակը քննարկում է իրավակիրառ պրակտիկայում ծագող այնպիսի իրավիճակներ, երբ օբյեկտիվորեն անհրաժեշտ է դառնում ընդլայնել այդ ցանկը: Այդ նպատակով դիտարկվում են երկու հիմնական ստրատեգիաներ՝ *contra legem* և *extra legem* իրավունքի զարգացման դոկտրինաները: Վերլուծության համար հիմք են ծառայում ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, մասնավորապես՝ անձեռնմխելիությամբ օժտված անձանց նկատմամբ քրեական հետապնդմանն առնչվող գործերով ձևավորված իրավական դիրքորոշումները:

Հոդվածում առանձնակի ուշադրություն է դարձվում այն դեպքերին, երբ քրեական վարույթը նախաձեռնվել է ոչ իրավասու սուբյեկտի կողմից կամ բացակայում է վարույթ նախաձեռնելու արձանագրությունը: Քննարկվում են նման խախտումների դատավարական հետևանքները և հաղթահարման ուղիները՝ ապացույցների անթույլատրելի ճանաչումից, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկի «բացում» և նոր հիմքի սահմանում:

**Հիմնաբառեր.** Քրեական հետապնդման դադարեցում, փակ ցանկ, *numerus clausus*, *contra legem*, *extra legem*, օրենսդրի գիտակցված լռություն, իրավունքի զարգացում,

անձեռնմխելիություն, վարույթ նախաձեռնելու արձանագրություն, իրավասության սահմանազատում:

Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը) թվարկված են ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում: ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ցանկը լիարժեք օրենսդրական փակ (սպառիչ) ցանկ է (numerus clausus), քանի որ այն սկսվում է «եթե» պայմանով, թվարկում է հետապնդումը դադարեցնելու տասնչորս հիմք, և նախադասությունն ավարտվում է առանց «և այլ դեպքերում» կամ նման այլ բաց թվարկում ենթադրող արտահայտությունների: Իրավական տեխնիկայի տեսանկյունից հետապնդումը դադարեցնելու փակ ցանկը լիարժեք է, քանի որ այն պարունակում է բոլոր հիմքերը մեկ կոնկրետ հոդվածում՝ առանց հղում կատարելու այլ հոդվածներում առկա հիմքերին:

Նկատի ունենալով «expressio unius est exclusio alterius» իրավական մաքսիմը՝ ըստ որի մեկի հիշատակումը բացառում է մյուսին, կարելի է եզրակացնել, որ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկը բացառում է այդ ցանկում չնախատեսված որևէ հանգամանք համարել որպես հետապնդումը դադարեցնելու հիմք: Այլ կերպ ասած՝ այդ փակ ցանկը պարունակում է իմպլիցիտ արգելք, որը դատախազին արգելում է քրեական հետապնդումը դադարեցնել ցանկում չնախատեսված որևէ հանգամանքի հիման վրա:

Արդյո՞ք ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ցանկը կարելի է համարել փակ՝ հաշվի առնելով ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածը («Հայեցողական քրեական հետապնդումը»), որը սահմանում է, որ հսկող դատախազն իրավասու է չհարուցել կամ դադարեցնել քրեական հետապնդումը, եթե առկա են ՀՀ ՔրՕ 81-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանները (գործուն գոջալ): Առաջին հայացքից կարող է թվալ, որ ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածը պարունակում է քրեական հետապնդումը դադարեցնելու ինքնուրույն հիմք, որը դուրս է ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի ցանկից, ուստի այդ ցանկը չի կարող համարվել փակ:

Իրականում ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածում քրեական հետապնդումը դադարեցնելու ինքնուրույն հիմք նախատեսված չէ: Քրեական հետապնդումը դադարեցնելու գործուն գոջալու հիմքը (ՀՀ ՔրՕ 81-րդ հոդված) ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով

(բլանկետային նորմով) նախատեսված հիմքերից մեկն է: ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածը սահմանում է ոչ թե քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմք, այլ ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և ՀՀ ՔրՕ 81-րդ հոդվածով նախատեսված կոնկրետ հիմքի կիրառման ընթացակարգը: Այլ կերպ ասած՝ ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածը վերաբերում է գործուն զղջման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դատախազի լիազորությանը և դրա իրականացման կարգին:

Հնարավոր են իրավիճակներ, երբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի օրենսդրական փակ ցանկում որևէ հանգամանք նախատեսված չէ, սակայն այն օբյեկտիվորեն և անխուսափելիորեն պետք է համարվի հետապնդումը դադարեցնելու հիմք: Արդյոք իրավակիրառողը կարող է այդ հանգամանքը ներառել քրեական հետապնդումը դադարեցնելու փակ ցանկում: Այս հարցին պատասխանելու համար պետք է պարզել, թե կոնկրետ հանգամանքն այդ ցանկում չնախատեսելն օրենսդրի բացթողման (օրենսդրական սխալի), թե՞ գիտակցված լուրջ արդյունք է: Հիմք ընդունելով օրենսդրական փակ ցանկերի տեսությունը՝ կարելի է նշել, որ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկում որևէ հանգամանքի բացակայությունը (օրենսդրական բացը՝ որպես նեգատիվ փաստ) ոչ թե օրենսդրի բացթողման (օրենսդրական սխալի) արդյունք է, այլ օրենսդրի գիտակցված լուրջ արդյունք է: Փակ ցանկերի պարագայում գործում է օրենսդրի գիտակցված լուրջ արդյունքի կանխավարկածը, այսինքն՝ ենթադրվում է, որ այդ հանգամանքը քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի ցանկում չներառելն օրենսդրի գիտակցված որոշումն է: Այս թեզի հիման վրա հնարավոր է որոշել, թե քրեական հետապնդումը դադարեցնելու օրենսդրական փակ ցանկում հետապնդումը դադարեցնելու նոր հիմք ներառելու անհրաժեշտության դեպքում դատախազը և դատարաններն իրավունքի զարգացման ո՞ր ստրատեգիայով են առաջնորդվելու՝ *extra legem* իրավունքի զարգացման դոկտրինով, թե՞ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինով<sup>2</sup>:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Գամբարյան Ա.Ս., Դալլաքյան Լ. Գ. Закрывые законодательные перечни (доктрина, техника и правоприменительная практика): монография. М.: Юрлитинформ, 2025.

<sup>2</sup> Տե՛ս Գամբարյան Ա. Ս. Развитие права *extra legem* и *contra legem* в случае закрытых законодательных перечней // Lex Russica. 2026. Т. 79, № 1 (230). С. 19-36.

Եթե կոնկրետ փաստական տվյալներով չի հերքվում օրենսդրի գիտակցված լուրջան կանխավարկածը, այսինքն՝ չի հաստատվում, որ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկում անհրաժեշտ հանգամանքը չներառելն օրենսդրական սխալի արդյունք է, ապա այդ ցանկն իրավունքի սկզբունքների թելադրանքով կարող է «բացվել» և դրանում նոր տարր ավելացվել *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա<sup>3</sup>: Այս պարագայում դատարանը գործում է օրենքին հակառակ, քանի որ, ինչպես նշվեց, օրենսդրական փակ ցանկի փաստից բխեցվում է այդ ցանկում չներառված տարրերի հետ իրավաբանական գործողություններ կատարելու իմպլիցիտ իրավական արգելքը:

ՀՀ դատական պրակտիկայում հանդիպել են իրավիճակներ, երբ դատարանները քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի օրենսդրական փակ ցանկում կոնկրետ հանգամանք ներառված չլինելը որակել են իրավունքի սկզբունքների հետ աղաղակող հակասություն և «բացել են» այդ ցանկը՝ դրանում ներառելով քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմք: Օրինակ՝ ՀՀ դատարանները 1998 թ. ՀՀ ՔրԴՕ գործողության ժամանակ հակադրվել են քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական վարույթը կարճելու) հիմքերի փակ ցանկին. նրանք օրենսդրական այդ փակ ցանկը «բացել են» և դատավորի անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը մերժելը (դատավորի անձեռնմխելիությունը չհաղթահարելը) որակել են որպես հետապնդումը դադարեցնելու հիմք: Այս դեպքերում ՀՀ դատարանները, ելնելով իրավունքի որևէ սկզբունքից, քրեադատավարական իրավունքը զարգացրել են *contra legem*<sup>4</sup>:

Այս օրինակը ներկայացնենք ավելի մանրամասն: Այսպես՝ 1998 թ. ՀՀ ՔրԴՕ 31-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված էր, որ քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե մեղադրյալը (. . .) օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից: Այս նորմից բխում էր, որ եթե քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունը հաղթահարված չէ, ապա քրեական վարույթը պետք է կասեցվի: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԳԴ5/0022/01/10 գործով 20.10.2011 թ. որոշմամբ սահմանել է, որ դատավորին քրեական հետապնդման (պատասխանատվության) ենթարկելու թույլտվություն ստանալու մասին

<sup>3</sup> Տե՛ս Գամбарյան Ա.Ս. Доктрина развития права вопреки закону (*contra legem*): монография. М.: Юрлитинформ, 2026.

<sup>4</sup> Տե՛ս Գամбарյան Ա. Ս. Развитие уголовно-процессуального права Армении вне закона (*extra legem*) и вопреки закону (*contra legem*) // Вестник Санкт-Петербургского университета. Право. 2024. Т. 15, № 1. С. 220-221.

իրավասու մարմնի միջնորդությունը մերժելու դեպքում քրեական հետապնդման մարմինը պարտավոր է կարճել քրեական վարույթը: Ստացվում է, որ 1998 թ. ՀՀ ՔրԴՕ 31-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում էր դատավորին քրեական հետապնդման անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը մերժելու դեպքում կասեցնել վարույթը, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը, փաստացի գործելով օրենսդրական այս կարգավորմանը հակառակ (contra legem), նշել է, որ այդ դեպքում վարույթը ոչ թե պետք է կասեցնել, այլ պետք է՝ կարճել (քրեական հետապնդումը դադարեցնել):

ՀՀ վճռաբեկ դատարանի այս դիրքորոշման հիմքում ընկած է **կոչոս** contra legem իրավունքի զարգացման դոկտրինը, քանի որ՝

1) օրենքն իրավասու մարմնից հստակ պահանջում է համապատասխան փաստակազմի դեպքում (անձեռնմխելիության առկայության դեպքում) կատարել «A» գործողությունը՝ կասեցնել վարույթը, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է կատարի «B» գործողությունը՝ դադարեցնել քրեական հետապնդումը: Օրենսդիրը միևնույն փաստը (դատավորին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը մերժելը) չէր կարող միաժամանակ համարել և՛ վարույթը կասեցնելու հիմք, և՛ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք:

2) այդ դիրքորոշման սուբստանցիոնալ հիմքը դատական իշխանության անկախության և անձեռնմխելիության հիմնարար սկզբունքներն են (տե՛ս նշված որոշման 47-րդ կետ):

Թիվ ԳԴ5/0022/01/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել է ՀՀ վերաքննիչ դատարանի դատական ակտը և գործն ուղարկել է ՀՀ առաջին ատյանի դատարան, որը պետք է կարճեր քրեական վարույթը: Հարց էր ծագում՝ ՀՀ առաջին ատյանի դատարանն ի՞նչ հիմքով պետք է կարճեր վարույթը, և անձն արդյո՞ք պետք է ձեռք բերեր ռեաբիլիտացիայի իրավունք: ՀՀ առաջին ատյանի դատարանը, նկատի ունենալով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը, որով դատավորի նկատմամբ քրեական հետապնդման իրականացումը դառնում է անհնարին, 17. 05. 2012 թ. որոշմամբ քրեական վարույթը կարճել է և քրեական հետապնդումը դադարեցրել է **ռեաբիլիտացնող հիմքով**: Այդ որոշումը կայացնելիս ՀՀ առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը սահմանող ՀՀ ՔրԴՕ 35-րդ հոդվածով՝ առանց հստակեցնելու, թե այդ հոդվածի ո՞ր մասով կամ ո՞ր կետով է ղեկավարվում, քանի

որ, ինչպես նշվեց, 1998 թ. ՀՀ ՔրԴՕ 35-րդ հոդվածում նախատեսված՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի ցանկում նման հանգամանք նախատեսված չէր: Ուստի բաց է մնում քրեական հետապնդումը հենց ռեաբիլիտացնող «հիմքով» դադարեցնելու դիրքորոշման պոզիտիվ-իրավական հիմնավորումը: Փաստն այն է, որ ՀՀ առաջին ատյանի դատարանը ոչ միայն «բացել է» քրեական հետապնդումը դադարեցնելու փակ ցանկը և այդ ցանկում ներառել է քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմք, այլ նաև այդ հիմքը համարել է ռեաբիլիտացնող:

Առաջին ատյանի դատարանի կողմից քրեական հետապնդումը ռեաբիլիտացնող հիմքով դադարեցնելու որոշման հիմքում ընկած է դատավարական իրավունքի **մեղմ** *contra legem* զարգացման դոկտրինը, քանի որ նա գործել է ոչ թե էքսպլիցիտ արգելքին (ուղիղ պարտականությանը) հակառակ, այլ փակ ցանկից բխող իմպլիցիտ արգելքին հակառակ:

Քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ պաշտոնաթող Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը հաղթահարելու գործի շրջանակում: ՀՀ սահմանադրական դատարանը, 04.09.2019 թ. ՍԴՈ-1476 որոշմամբ, 1998թ. ՀՀ ՔրԴՕ 35-րդ հոդվածը՝ Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց գործառույթային անձեռնմխելիությունը՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների թվում չնախատեսելու մասով, ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Շեղվելով բուն հարցից՝ փաստենք, որ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկում կոնկրետ հանգամանք նախատեսված չլինելու հարցը դարձել է և՛ ՀՀ վճռաբեկ դատարանի, և՛ ՀՀ սահմանադրական դատարանի քննության առարկան: ՀՀ վճռաբեկ դատարանը հարցը լուծել է *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի քողի ներքո, իսկ ՀՀ սահմանադրական դատարանը՝ սահմանադրական արդարադատության դոկտրինի հիման վրա: Ստացվում է, որ նույն բնույթի հարցի լուծումը գտնվել է և՛ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավասության, և՛ ՀՀ սահմանադրական դատարանի իրավասության տիրույթում: Սա հակասում է պետական մարմինների գործառույթների և լիազորությունների կրկնման անթույլատրելիության սկզբունքին: Նման օրինակները ցույց են տալիս, որ ՀՀ սահմանադրական դատարանի և մյուս դատարանների գործառույթների

սահմանազատման գծերը դառնում են էլ ավելի մշուշոտ: Ավելին՝ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հետևողական իրականացման պարագայում կվերանան ՀՀ սահմանադրական դատարանի գոյաբանական հիմքերը: Այս հողվածում միայն նշենք, որ վերջին շրջանում վերացական նորմավերահսկողության քննադատությունն ուժեղացել է: Մեղադրանքները հիմնվում են այն փաստի վրա, որ սահմանադրական դատարանը Քելզենի՝ նորմատիվիզմին և պոզիտիվիզմին մոտ կանգնած իրավունքի հայեցակարգի շրջանակներում ստեղծված և դրանով սահմանափակված ինստիտուտ է, ինչն օբյեկտիվորեն սահմանափակում է հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում այդ համակարգի արդյունավետությունը<sup>5</sup>:

Առնվազն ՀՀ սահմանադրական դատարանի վերջին տարիների պրակտիկան ցույց է տալիս, որ քելզենյան մոդելի սահմանադրական արդարադատությունն ընտրել է «սեփական մայրամուտի» ճանապարհը: Հնարավոր է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր տեղը զիջի նոր տեսական ինստիտուտին՝ այսպես կոչված «Իրավունքի փիլիսոփայության դատարանին», որի հիմնական խնդիրը կլինի ոչ թե կոնկրետ օրենսդրական դրույթի սահմանադրականությունը որոշելը, այլ իրավափիլիսոփայական (վերպոզիտիվ) հիմնավորումներով ռազմավարական իրավադրումը: Իրավունքի փիլիսոփայության դատարանի իրավասության մեջ կարող են մտնել քաղաքական իշխանության մարմինների միջև իրավա-քաղաքական վեճերի լուծումը, եթե դրանք հնարավոր չէ կարգավորել քաղաքական կառուցակարգերով, պետության ինքնիշխանության էական սահմանափակումներ ենթադրող հարցերի (օրինակ՝ ինքնիշխանության ծավալի վրա էապես ազդող միջազգային պայմանագրերի վավերացման) վերաբերյալ որոշումների կայացումը, սահմանադրական փոփոխությունների հարցերը, ճգնաժամային իրավիճակներում վերպոզիտիվ իրավական և պետականագիտական սկզբունքների հիման վրա այլ որոշումներ կայացնելը:

Բանն այն է, որ պետության կողմից ստեղծված և ձևավորված համալսարաններում, որտեղ գերակայում է պոզիտիվիզմը և էտատիզմը, կրթություն ստացած դատավորը հաճախ ունակ չէ վերպոզիտիվ սկզբունքների հիման վրա լուծելու՝ քաղաքական իշխանության մարմինների միջև վեճերը, որոնց կողմերից մեկն իշխող քաղաքական ուժն

---

<sup>5</sup>Տե՛ս Дедов Д. И. Методология права 2.0. М.: Дело, 2023. С. 53.

է, կամ հասարակության համար մասշտաբային նշանակություն ունեցող այլ հարցեր: Մասնավորապես, հետխորհրդային դատավորը հաճախ անկարող է իրավական վեճը լուծելիս դուրս գալ պոզիտիվ իրավունքի նեղ շրջանակից, հատկապես՝ երբ խոսքը վերաբերում է քաղաքական ինստիտուտների միջև վեճերի կամ հասարակության համար ճակատագրական նշանակություն ունեցող հարցերի լուծմանը: Եթե այդ տեսակի դատավորը նույնիսկ հակադրվում է պոզիտիվ իրավունքին, ապա դա պայմանավորված է հիմնականում ոչ թե վերպոզիտիվ իրավական սկզբունքներով, այլ թելադրված է քաղաքական նպատակահարմարությամբ: Մինչդեռ նման բնույթի հարցերը պահանջում են իրավական և պետականագիտական սկզբունքների վրա հիմնված լուծումներ:

Այս խնդիրները հաղթահարելու նպատակով «Իրավունքի փիլիսոփայության դատարան» ձևավորելիս տրամաբանական կլիներ դրա կազմում ներառել գործող քաղաքական իշխանությունից անկախ անձանց, օրինակ՝ նախկին նախագահներին ու բարձրագույն դատարանների նախագահներին, ովքեր ավարտել են իրենց քաղաքական և մասնագիտական կարիերան, ստանում են բարձր կենսաթոշակ, և նրանց լեգիտիմությունն իրավաբանական ընթացակարգերով (օրինակ՝ պաշտոնանկություն կամ քրեական հետապնդում հարուցել) կասկածի տակ չի դրվել:

Բարձրագույն դատարանների նախկին նախագահները, ի տարբերություն այլ ատյանի դատարանների, իրենց պրակտիկայում, ամենայն հավանականությամբ, բախվել են իրավունքի զարգացման այնպիսի իրավական հարցերի, որոնք լուծվել են իրավունքի սկզբունքների հիման վրա: Բոլոր դեպքերում, բարձր դատարանների դատավորների լեգիտական մտածողությունը համեմատաբար մեղմ է արտահայտված:

Ինչ վերաբերում է պաշտոնաթող նախագահներին, ապա նրանց՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում պետությունը կառավարելու համար անհրաժեշտ ռազմավարական մտածողությունն իր էությանը իմաստասիրական մտածողության ձև է, որը կոչված է գտնելու հավասարակշռություն և սահմանելու երկարաժամկետ նպատակներ: Նրանց հասարակական կարգավիճակն ու փորձը հնարավորություն կտան գործել՝ ելնելով պետության ու հասարակության երկարաժամկետ շահերից, ոչ թե նեղ քաղաքական պահանջներից:

Իրավունքի փիլիսոփայության դատարանը «վետերանների ակումբ» չէ, այլ նպատակային մեխանիզմ՝ փոխհատուցելու սովորական դատարանների անկարողությունը՝ դիմակայելու քաղաքական ճնշմանը և առաջնորդվելու վերազդիտիվ սկզբունքներով: Իհարկե, դատական համակարգի այսքան արմատական վերաճումը պահանջում է խոր միջառարկայական քննարկում:

Վերադառնանք բուն հարցին: ՀՀ վճարել դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներից հետո անձեռնմխելիությամբ օժտված անձանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի խնդիրն օրենսդրական հարթությունում լուծվեց 2021թ. ՀՀ ՔրԴՕ-ով: Նոր օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի ցանկում նախատեսվեցին անձեռնմխելիությանը վերաբերող երկու նոր հիմք:

Այնուամենայնիվ, չի բացառվում, որ պարզապես ևս կարող է ծագել քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկը *contra legem* տրամաբանությամբ «բացելու» անհրաժեշտություն: Նման իրավիճակներ կարող են ծագել, եթե դատարանում պարզվում է, որ քրեական հետապնդում հարուցելու որոշումը կայացրել է նման իրավասություն չունեցող անձը, օրինակ՝ այդ որոշումը կայացրել է դատախազների խմբի անդամը, մինչդեռ քրեական հետապնդումը հարուցելը խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունն է: Դատարանը, բացահայտելով, որ քրեական հետապնդումն հարուցել է ոչ իրավասու անձը, պետք է համարի, որ տվյալ պարագայում քրեական մեղադրանքն իրավաբանորեն բացակայում է, որի պարագայում քրեական դատավարությունը չի կարող շարունակվել. չկա քրեական արդարադատություն՝ առանց քրեական մեղադրանքի: Այս իրավիճակում պաշտոնական քրեական հետապնդումը դադարեցնելու անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ քրեական հետապնդումն իրավաբանորեն համարվում է գոյություն չունեցող: Սակայն կարող է ծագել փաստացի քրեական հետապնդումը դադարեցնելու անհրաժեշտություն, որի պարագայում մարդը կպաշտպանվի կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքով: Բացի այդ, քննարկվող դեպքում անխուսափելիորեն ծագում է քրեական վարույթը կարճելու անհրաժեշտություն, մինչդեռ ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական վարույթը կարճելու հիմքերի փակ ցանկում օրինական քրեական մեղադրանքի բացակայությունը (մեղադրանքի անվավերությունը)

նույնպես նախատեսված չէ: Այս իրավիճակում ՀՀ դատարանները, ղեկավարվելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինով, պետք է «բացեն» քրեական վարույթը կարճելու հիմքերի փակ ցանկը և ներառեն նոր հիմք՝ օրինական քրեական մեղադրանքի բացակայությունը (մեղադրանքի անվավերությունը):

Ռուսական դատական պրակտիկայում քննարկվել է վերը նշված դեպքից փոքր-ինչ տարբերվող մեկ այլ հարց, սակայն ի տարբերություն մեր առաջարկած լուծման՝ ռուս տեսաբաններն այն որակել են ոչ թե *contra legem*, այլ իրավունքի անալոգիայի հիման վրա *extra legem* իրավունքի զարգացում: Այսպես՝ Ա. Վ. Սմիռնովը դատական պրակտիկայից բերում է օրինակ, երբ հանցագործության հատուկ սուբյեկտին որպես մեղադրյալ է ներգրավել ոչ պատշաճ պաշտոնատար անձը (ով չուներ տվյալ սուբյեկտին որպես մեղադրյալ ներգրավելու լիազորություն): Խախտումը բացահայտվել է նախնական դատական լուսմաների ընթացքում: Մրցակցության սկզբունքի տեսանկյունից տվյալ գործով արդարադատություն չէր կարող իրականացվել, քանի որ օրենքի խախտմամբ առաջադրված մեղադրանքն իրավաբանորեն անվավեր էր, հետևաբար, արդարադատության առարկան բացակայում էր: Մյուս կողմից՝ օրենսգրքով քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի սպառիչ ցանկում մեղադրանքի անվավերությունը (բացակայությունը)՝ որպես քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք, նախատեսված չէ: Տվյալ գործով դատարանը, այնուամենայնիվ, որոշել է դադարեցնել քրեական հետապնդումը՝ *մեղադրանքի բացակայության հիմքով*: Ա. Վ. Սմիռնովը դատարանի կողմից քրեական հետապնդման դադարեցումը որակել է որպես իրավունքի անալոգիայի կիրառում, այսինքն՝ դատավորն օրենսդրական բացը լրացրել է մրցակցության սկզբունքի հիման վրա<sup>6</sup>:

Քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու հիմքերի օրենսդրական փակ ցանկը «բացելու» անհրաժեշտություն կարող է ծագել նաև այն դեպքում, երբ նյութերում բացակայում է քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը: Օրինակ՝ նախաքննության ընթացքում բացահայտված նոր դեպքի (այլ ենթադրյալ հանցանքի) կապակցությամբ քննիչը քրեական վարույթ նախաձեռնելու փոխարեն քննությունն իրականացնում է դրա հետ *in rem* կապ չունեցող քրեական

<sup>6</sup> Ст'и Смирнов А. В., Манукян А. Г. Толкование норм права: учебно-практическое пособие. М.: Проспект, 2008. С. 124-126.

վարույթի սահմաններում: Այս դեպքում քննիչը խախտում է ՀՀ ՔրԴՕ 178-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերի պահանջները: Այս նորմերն անուղղակիորեն կանխորոշում են նախաքննության *in rem հորիզոնական* սահմանը, և դրանք քննիչին իմպլիցիտ արգելում են նույն վարույթի շրջանակում անմիջականորեն քննել քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նկարագրված արարքի հետ ակնհայտ առնչություն չունեցող նոր դեպքեր: Այս խախտումն ինչ դատավարական հետևանքներ կարող է առաջացնել:

Նկարագրված իրավիճակում քննիչը նոր դեպքի կապակցությամբ քրեական վարույթ, փաստորեն, չի նախաձեռնել, սակայն օրենքով նախատեսված չէ, թե քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայության դեպքում այդ մասով վարույթի «ճակատագիրը» ինչպես պետք է լուծել, օրինակ՝ ՀՀ ՔրԴՕ 12-րդ և 13-րդ հոդվածներում նախատեսված չէ վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը որպես քրեական հետապնդում չհարուցելու (հետապնդումը դադարեցնելու) և վարույթը կարճելու ինքնուրույն հիմք: Այս բացը բարդացնում է քննարկվող հարցի լուծումը, ուստի դրա կապակցությամբ հնարավոր են մի քանի ստրատեգիաներ (ճանապարհներ):

Այդ ստրատեգիաներից մեկը կարող է լինել քրեական հետապնդումը բացառող հանգամանքների սպառիչ (փակ) ցանկը *contra legem* տրամաբանությամբ «բացելու» և այդ ցանկում քրեական վարույթի արձանագրության բացակայությունը ներառելու ստրատեգիան: Սա նշանակում է, որ ՀՀ դատարանները հաստատում են, որ ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանքների փակ ցանկ, ուստի գործում է օրենսդրի գիտակցված լռության կանխավարկածը: Այնուհետև դատարանը, ղեկավարվելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինով և հիմք ընդունելով քրեական վարույթի հանրայնության սկզբունքը ու դրանից անմիջապես բխող «վարույթի հանրային գործունեությունն իրականացվում է բացառապես իրավունքի շահից ելնելով՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու մարմինների կողմից» կանոնը, «բացում է» ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում առկա փակ ցանկը և ճանաչում է քրեական հետապնդումը բացառող ևս մեկ հանգամանք՝ նախաքննությունը կատարվել է քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայության պայմաններում:

Առկա խնդրի լուծման մյուս ճանապարհը կարող է լինել քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայության պայմաններում հավաքված

ապացույցները ոչ պատշաճ սուբյեկտի կողմից ձեռք բերված լինելու հիմքով անթույլատրելի ճանաչելու և «անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը» հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու ստրատեգիան: Այսպես՝ ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝ տվյալ քրեական վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող անձի կողմից: Այս դեպքում, եթե հնարավոր չէ հավաքել նոր ապացույցներ, ապա քրեական հետապնդումը կդադարեցվի ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը:

Նմանատիպ իրավիճակ է, երբ քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը թեև փաստացի առկա է, սակայն պարզվում է, որ քրեական վարույթը նախաձեռնել է ոչ իրավասու սուբյեկտը: Քրեական վարույթ նախաձեռնելու լիազորության միակ կրողը քննիչն է: Եթե քրեական վարույթը նախաձեռնվել է ոչ պատշաճ սուբյեկտի, օրինակ՝ հետաքննիչի կամ դատախազի կողմից, ապա դա նշանակում է, որ կատարվել է *ultra vires* գործողություն:

Ի տարբերություն քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկը «բացելու» ստրատեգիայի՝ ապացույցներն անթույլատրելի ճանաչելու և «անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը» հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու ճանապարհը քրեադատավարական մտածողությանն առավել «հոգեհարազատ է»: Բացի այդ, այն կարող է օգտագործվել ոչ միայն դատարանների, այլ նաև քրեական վարույթի հանրային մասնակիցների կողմից:

Մինչդեռ այս ստրատեգիան կիրառելի չէ, եթե ապացուցողական գործողությունները կրկին կատարելով հնարավոր է հավաքել ապացույցներ, քանի որ այս դեպքում քրեական հետապնդումը դադարեցնելու՝ «անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը» հիմքը կբացակայի: Այնուամենայնիվ, նույնիսկ նոր ապացույցներ հավաքելու պարագայում ծագելու է քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու հարցը, քանի որ քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը կամ լիազորություն չունեցող անձի կողմից վարույթ նախաձեռնելն այնպիսի խախտումներ են, որոնք չեն կարող անհետևանք մնալ: Քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը կամ *ultra vires* քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը չեն

կարող փաստել նախաքննության սկիզբը, իսկ եթե փաստացի կատարվել է նախաքննություն, ապա նման նախաքննությունն ի սկզբանե կհամարվի «վիրուսով վարակված», որի հանգրվանը լինելու է քրեական հետապնդման դադարեցումը և քրեական վարույթի կարճումը:

Նման դեպքում այլ բան չի մնում, քան քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի (<< ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մաս) և քրեական վարույթը կարճելու հիմքերի (ՔրԴՕ 13-րդ հոդվածի 1-ին մաս) օրենսդրական փակ ցանկերը «բացել» contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա և այն լրացնել քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմքերով՝ վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը կամ լիազորություն չունեցող անձի կողմից վարույթը նախաձեռնվելը:

Այսպիսով՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի (<< ՔրԴՕ 12-րդ հոդված) փակ ցանկը սպառիչ է (numerus clausus), ինչը նշանակում է, որ դրանում չնախատեսված որևէ հանգամանք չի կարող հիմք լինել քրեական հետապնդումը դադարեցնելու համար: Չնայած դրան, իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ իրավունքի հիմնարար սկզբունքների գերակայությունն ապահովելու անհրաժեշտությունը երբեմն ստիպում է դատարաններին «բացել» այդ փակ ցանկը և ներառել քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմքեր: Դա տեղի է ունենում contra legem իրավունքի զարգացման դոկտրինի շրջանակներում:

Քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը կամ վարույթը ոչ իրավասու սուբյեկտի կողմից նախաձեռնելը հիմնարար խախտումներ են, որոնց դեպքում քրեական վարույթը չի կարող ունենալ ապագա, սակայն այս հանգամանքները նախատեսված չեն քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկում: Նման դեպքերում հնարավոր են երկու ստրատեգիաներ՝ ապացույցներն անթույլատրելի ճանաչելը և «անձը չի կատարել արարքը» հիմքով հետապնդումը դադարեցնելը, կամ փակ ցանկը «բացել» contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա և ճանաչել հետապնդումը դադարեցնելու նոր հիմք:

---

# THE CLOSED LIST OF GROUNDS FOR TERMINATING CRIMINAL PROSECUTION AND THE STRATEGIES FOR ITS "OPENING"

**GHAMBARYAN ARTHUR**

Head of the Chair of Theory of Law and Constitutional Law,  
Russian-Armenian University,  
Professor at the Public Administration Academy of the Republic of Armenia,  
Doctor of Law, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia

---

**Abstract.** The article examines the nature of the legislative closed list (*numerus clausus*) of grounds for terminating criminal prosecution, the possibility of its "opening," and the strategies for incorporating new grounds. The exhaustive nature of the list enshrined in Part 1 of Article 12 of the RA Criminal Procedure Code is analyzed, along with the resulting presumption of the legislator's conscious silence, which prohibits considering any circumstance not expressly provided in the list as a basis for terminating prosecution.

The author discusses situations arising in law enforcement practice where there is an objective need to expand this list. For this purpose, two main strategies are considered: the doctrines of *contra legem* and *extra legem* development of law. The analysis is based on the decisions of the RA Court of Cassation and the RA Constitutional Court, particularly the legal positions formed in cases related to criminal prosecution of persons entitled to immunity.

Special attention is paid to cases where criminal proceedings were initiated by an unauthorized subject or where the record of initiating proceedings is absent. The procedural consequences of such violations and the ways to overcome them are discussed, ranging from recognizing the evidence as inadmissible to "opening" the closed list of grounds for terminating criminal prosecution and establishing a new ground.

**Key words:** termination of criminal prosecution, closed list, *numerus clausus*, *contra legem*, *extra legem*, legislator's conscious silence, development of law, immunity, record of initiating proceedings, delimitation of jurisdiction.

---

## ЗАКРЫТЫЙ ПЕРЕЧЕНЬ ОСНОВАНИЙ ПРЕКРАЩЕНИЯ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ И СТРАТЕГИИ ЕГО «ОТКРЫТИЯ»

### ГАМБАРЯН АРТУР

Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета,  
профессор Академии государственного управления Республики Армения,  
доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

---

**Аннотация:** В статье исследуется природа законодательного закрытого перечня (*numerus clausus*) оснований прекращения уголовного преследования, возможность его «открытия» и стратегии включения новых оснований. Анализируется исчерпывающий характер перечня, закрепленного в части 1 статьи 12 УПК РА, и вытекающая из него презумпция сознательного умолчания законодателя, которая запрещает рассматривать любое обстоятельство, не предусмотренное перечнем, в качестве основания для прекращения преследования.

Автор рассматривает ситуации, возникающие в правоприменительной практике, когда объективно возникает необходимость расширения этого перечня. С этой целью рассматриваются две основные стратегии: доктрины развития права *contra legem* и *extra legem*. Основой для анализа служат решения Кассационного суда РА и Конституционного суда РА, в частности, правовые позиции, сформированные по делам, связанным с уголовным преследованием лиц, обладающих неприкосновенностью.

Особое внимание уделяется случаям, когда уголовное производство было инициировано неуполномоченным субъектом или когда отсутствует протокол о инициировании уголовного производства. Обсуждаются процессуальные последствия таких нарушений и пути их преодоления, начиная от признания доказательств недопустимыми и заканчивая «открытием» закрытого перечня оснований прекращения уголовного преследования и установлением нового основания.

**Ключевые слова:** прекращение уголовного преследования, закрытый перечень, *numerus clausus*, *contra legem*, *extra legem*, сознательное умолчание законодателя, развитие права, неприкосновенность, протокол инициирования уголовного производства, разграничение компетенции.

## Գրականության ցանկ

Гамбарян А. С. Развитие права *extra legem* и *contra legem* в случае закрытых законодательных перечней // *Lex Russica*. 2026. Т. 79, № 1 (230). С. 19-36.

Гамбарян А. С. Развитие уголовно-процессуального права Армении вне закона (*extra legem*) и вопреки закону (*contra legem*) // Вестник Санкт-Петербургского университета. Право. 2024. Т. 15, № 1. С. 206–224.

Гамбарян А. С. Доктрина развития права вопреки закону (*contra legem*): монография. М.: Юрлитинформ, 2026. 235 с.

Гамбарян А. С., Даллакян Л. Г. Закрытые законодательные перечни (доктрина, техника и правоприменительная практика): монография. М.: Юрлитинформ, 2025. 168 с.

Дедов Д. И. Методология права 2.0. М.: Дело, 2023. 752 с.

Смирнов А. В., Манукян А. Г. Толкование норм права: учебно-практическое пособие. М.: Проспект, 2008. 144 с.

Հոդվածը գրախոսվել է 16.01.2026  
Ներկայացվել է տպագրության 21.01.2026